բնոյթ կրող բոլոր կարեւոր հարցերում Ազգային Խորհուրդը և Արեւմտահայ Բիւրօն գործում էին համախոհ ու համերաշխ, մանաւանդ, ճակատի պաշտպանութեան գործում*):

Ռազմաճակատի դրութիւնը երթալով՝ բարդանում ու ծանրանում էր: Թիկունքում, երկրի զանազան կողմերում դարձանում և ամրանում էին կենտրոնախոյս ուժերը, որոնք ձգտում էին արտաքին պատերազմը վերածել ներքին՝ քաղաքացիական կռւի: Այս աշխատանքը աւելի սաստկացաւ, մանաւանդ, Լենինի և ընկերների, Գերմանիայի վրայով, Ռուսաստան հասնելուց յետոյ: Բոլշեւիկները յայտնապէս աշխատում էին քայքայել ռազմաճակատը և թիկունքի պաշտպանութեան գործը: Ցողնած ժողովրդին ուղղելով հրապուրիչ խօսքեր ու գայթակղեցնող խոստումներ, անսանձ խուժանավարութեամբ ու միջոցների մէջ խտրութիւն չդնող գործելակերպով՝ նրանք յաջողում էին իրենց կողմը քաշել պատերազմից դուրս ու պարէնի նեղութիւն կրող տգէտ զանգւածները և նրանց միջոցով պայքարել կառավարութեան դէմ: Բոլշեւիկների ձեռքին մասնաւորապէս սուր դէնք էր անջատ հաշտութեան և ազգային ինքնորոշման պահանջը: Ի զուր Բանւ. և Զինւ. Խորհրդում Ծերեթելին ջանքեր էր թափում համոզելու, որ «անջատ հաշտութիւնը» ո՛չ միայն ցանկալի չէ, այլ և անիրագործելի է, որովհետեւ, այդ դէպքում, ռուսական յեղափոխութիւնը հարկադրւած կը լինի անյապաղ նոր պատերազմի ելնել այս անգամ արդէն գերմանական կօալիցիային պատկանող երկրների կողմը: Ի զուր Քերենսկին հակաճառում էր յանուն ազգերի ինքնորոշման սկզբունքի խուժանավարօրէն Թիւրքահայաստանի պարպումը պահանջող Լենինին, թէ՝ «Մենք չենք կարող պարպել Հայաստանը, որովհետեւ այդ դէպքում Հայաստանից ոչինչ չի մնայ. նա կը կորչի քիւրդերի և թիւրքերի զանակների տակ». — ամբոխային հոգեբանութիւնը կատարում էր իր քա՛յքայիչ գործը: Եւ անգամ հայերի մէջ գտնւում էին մարդիկ, որոնք ծառանում էին Քերենսկիի այնքա՜ն բնական ու մարդկային յայտարարութեան դէմ. «Սա չափազանց վնասակար յայտարարութիւն է հայ ժողովրդի շահերի տեսակէտից, գրում էր Թիֆլիսի «Պայքար» թերթը (սոց. դեմ.): Այս յայտարարութիւնը չի համապատասխանում դեմոկրատական իրական քաղաքականութեան և չափազանց վնասակար է հայ ժողովրդի շահերի տեսակէտից: Կրկին զօրքին, բազմաչարչար բանւորութեանն ու գիւղացիութեան յայտարարում են, որ նրանք չարունակեն ապրել դժոխային պայմաններում հայերի համար»: Եւ Ռուսաստանի բոլշեւիկների հետ միասին՝ հայ սոցիալ-դեմոկրատներն էլ գերադասում էին վարել մի քաղաքականութիւն, որ հայ ժողովուրդը ապրի դժոխային պայմաններում, միայն թէ ռուս «բազմաչարչար բանւորութիւնն ու գիւղացիութիւնը» պատճառ չունենայ դժգոհ լինելու:

Սակայն, քանի ժամանակն անցնում էր, այնքան կառավարութեան համար դառնում էր դժւար երկրում աճող անիշխանութեան, պարենաւորման

---

*) Ազգային Համագումարի և Ազգային Խորհրդի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կարելի է գտնել Հ. Յ. Դ. Փարիզի Շրջ. Կոմիտէի հրատարակած «Մայիս 28», Փարիզ, 1926թ. գրքում: